

ՀԻՄՆԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ



Ի՞նչ է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

- **Իրաւական** բառ մըն է, որ կը նշէ խումբ մը (ազգային, ցեղային, կրօնական) **ամբողջութեամբ կամ մասամբ** բնաջնջելու նպատակը:
- Բնաջնջումի տարբեր ձեւեր կան.

ա) Սպանութիւն,

բ) Մարմնական կամ մտային լուրջ վնաս,

գ) Սպանութեան տանող պայմաններ ստեղծել,

դ) Արգիլել, որ խումբին մէջ ծնունդներ ըլլան,

ե) Խումբին մանուկները ուրիշ խումբ փոխադրել:

Ո՞Վ ԿԸ ԳՈՐԾԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

- Պետություն մը (Թուրքիա, Գերմանիա, Սերպիա, Ռուսաստան, Սուտան, եւ այլն):
- Միայն պետությունը միջոցները ունի (բանակ, ոստիկանություն, քարոզչություն, օրէնքներ, հրամայելու ուժ, եւ այլն) ցեղասպանութեան ծրագիր մը գործադրելու համար
- **Պետությունը կը շարունակէ պատասխանատու ըլլալ՝ ցեղասպան կառավարությունը գոյություն ունենայ կամ ոչ:**

Ծանօթ. Բացառություններ կան, երբ ցեղասպանությունը անհատի մը գործը եղած է (օրինակ՝ Նամիպիա):

ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ԹԻՒԸ ԿԱՐԵՒՈՐ Է

Նամիպիա/ (1904)՝ 65,000

Հայերը (1915-1922)՝ 1,500,000

Հրեաները (1939-45)՝ 6,000,000

Գամպոնջիա (1975-1979)՝ 2, 000,000

Պոսնիա (1992-1995)՝ 35,000

Ռուանդա (1994)՝ 500,000-1,000,000

Սուտան (2003-2009)՝ 178,000-460,000

Ի՞ՆՉ Է ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

1915ին ի վեր, **Մեծ Եղեռն** եղած է մեր ամենէն գործածական անուանումը՝ Թուրքիոյ գործած ցեղասպանութիւնը նշելու համար:

Հայերէն **եղեռն** կը նշանակէ «ոճիր» («չարիք»ի յաւելումով):

Եղեռնագործ կը նշանակէ «ոճրագործ»:

Վերջին յիսնամեակին, «եղեռն» բառը դարձած է «ցեղասպանութիւն» բառի հոմանիշ

(օրինակ՝ «մշակութային եղեռն» = cultural genocide)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԸ ՄԵԾ ԵՂԵՌՆ Է

- 1915-1922ի դեպքերուն պատմական անունը Մեծ Եղեռն է:
- 1915-1922ի դեպքերուն իրաւական անունը ցեղասպանութիւն է:

ՈՒՐԻՇ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԼ ԱՆՈՒՆ ՈՒՆԻՆ

- Հրեական ցեղասպանության անունը **Շոա** է
- Գնչուներու ցեղասպանության անունը **Փորրայմոս** է
- Ասորիներու ցեղասպանության անունը **Սեյֆո** է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ 1914ԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՕՍՄԱՆԵԱՆ, ՌՈՒՍԱԿԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ (1828-1914)
 ARMENIA UNDER OTTOMAN, RUSSIAN AND PERSIAN DOMINATION (1828-1914)



ԲՌՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ՝

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆ

- 1913ի պետական հարուածէն ետք, Երիտասարդ Թուրքերու կուսակցութիւնը ձեռք առած էր Թուրքիոյ կառավարութիւնը: Օսմանեան Խորհրդարանի դերը հետզհետէ ձեւական դարձած է:
- Երեք հոգի կ'առաջնորդէին կառավարութիւնը եւ կուսակցութիւնը՝ Թալէաթ (Ներքին գործոց նախարար), Էնվեր (Պատերազմական նախարար) եւ Ճեմալ (Ծովուծի նախարար):

ՊԱՏԵՐԱԶՄ՝

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՊԱՅՄԱՆ

- 1914-1918՝ Առաջին Աշխարհամարտ
- Մեկ կողմ՝ Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսա եւ Իտալիա:
- Հակառակ կողմ՝ Թուրքիա, Գերմանիա, Աւստրիա եւ Պուլկարիա:

ԻՆՉՈ՞Ւ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸՆ ԷՐ

- Թուրքիա 1894-էն մինչեւ 1922 ամէն յարմար առիթով հայերու ջարդեր կազմակերպած է:
- 1915-1922-ի Մեծ Եղեռնը
 - ա) **ծրագրուած** ոճիր մըն էր
 - բ) **կանխամտածուած** ոճիր մըն էր:
 - գ) **համակարգուած** ոճիր մըն էր:
- Նպատակը ո՛չ միայն հայերը ջարդել էր, այլեւ **ոչնչացնել**:

«ՆԻԻ ԵՈՐՔ ԹԱՅՄՁ», ԴԵԿՏԵՄԲԵՐ 15, 1915

MILLION ARMENIANS KILLED OR IN EXILE

American Committee on Relief
Says Victims of Turks Are
Steadily Increasing.

POLICY OF EXTERMINATION

More Atrocities Detailed in Support
of Charge That Turkey is
Acting Deliberately.

«Միլիոն մը հայեր սպաննուած կամ
արստրուած»

«Բնաջնջումի քաղաքականութիւն»

«. . . Թուրքիա կը գործէ դիտմամբ»

ԻՆՉՈ՞Ւ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ

- Երիտասարդ Թուրքերը ծրագրած են երկրին տալ թրքական ինքնություն:

Հայերը թրքական ինքնություն չունեն:

- Ծրագրած են թրքական պետություն ստեղծել, ուր ոչ-թուրքերը տեղ պիտի չունենային:

Հայերը ոչ-թուրքերուն մաս կը կազմեն:

- Ծրագրած են տնտեսությունը թուրքերու ձեռքը կեդրոնացնել:

Ոչ-թուրքերը տնտեսական գլխավոր ուժն էին:

- Երագրած են Փոքր Ասիայէն մինչեւ Կեդրոնական Ասիա՝ բոլոր թրքական ծագումով ժողովուրդները հաւաքել:

Հայերը արգելք մըն էին այդ երագին:

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԾՐԱԳԻՐԸ

- 1) Թեւերն ու ոտքերը կտրել:
- 2) Գլուխը կտրել:
- 3) Մարմինը բզկտել:

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԾՐԱԳԻՐԸ (1)

Թեւերը եւ ոտքերը (զինուորները) կտրուեցան:

- 15-45 տարեկան հայերու զինուորագրում
- Զինաթափում
- Ծանր գործերու յատկացում
- Սպանութիւն



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԾՐԱԳԻՐԸ (2)

Գլուխը (ղեկավարությունը) կտրուեցաւ

- Պոլսոյ 600 հայ ղեկավարներու ձերբակալութիւն եւ արքայ:
- Նոյն գործողութիւնը կրկնուեցաւ ուրիշ քաղաքներու մէջ:
- Մեծ մասը սպաննուեցաւ:



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԾՐԱԳԻՐԸ (ՅԱ)

Մարմինը (ծերեր, կիներ եւ մանուկներ) բզկտուեցաւ

- Ընդհանուր տեղահանութեան հրաման:
- Բնակչութիւնը արտորուեցաւ:
- Իրենց բնակարանները կողոպտուեցան:
- Աքսորեալները յարձակման ենթարկուեցան ու սպաննուեցան:



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԾՐԱԳԻՐԸ (ՅԲ)

Բզկտուած մարմինն ալ մնաց առանց թաղուելու:

-- Վերապրողները հասան Սուրիա:

-- Ապա նետուեցան անապատ (Տէր Զօր):



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԾՐԱԳԻՐԸ (3Գ)

Բզկտուած մարմինէն բեկորներ անհետ կորսուեցան:

- Բազմաթիւ մանուկներ յանձնուեցան թրքական որբանոցներու կամ արտորէն փրկուեցան ու իսլամացան:
- Բազմաթիւ կիներ իսլամներու կողմէ ազատեցան եւ ամուսնացան՝ իսլամանալով կամ պահելով քրիստոնէութիւն:

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ ԹԻԻԸ

- Թուրքիոյ հայերու թիւը (1914)՝ **շուրջ 2 միլիոն:**
- 1915-1922ին **շուրջ 1,500,000 հայ** սպաննուեցաւ:
- Վերապրողները ցրուեցան ու կազմեցին **Սփիւոքը:**

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԳԼԽԱԻՈՐ ՎԱՅՐԵՐԸ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ (1915-1923)
THE GENOCIDE (1915-1923)



0	200	400	600	800	1000	1200	1400	1600	1800	2000
---	-----	-----	-----	-----	------	------	------	------	------	------

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

- Որոշ տեղեր, հայերը հակառակեցան տեղահանության եւ կոռուեցան:
- **Շապին Գարահիսար** եւ **Ուրֆա**՝ մինչեւ վերջ:
- **Վան**՝ մինչեւ որ ռուսական զորքերը եւ հայ կամաւորները հասան:
- **Մուսա Տաղ**՝ մինչեւ որ ֆրանսական նաւեր հասան:




ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

- Թալեաթ յայտարարեց. «Ասկէ ետք այլեւս **50 տարի** որեւէ Հայկական Հարց պիտի չըլլայ»:
- **Երկու յաջորդական սերունդներ (= 50 տարի)** այնքան ցնցուած էին, որ ոչ մէկ կերպով կրցան արդարութիւն պահանջել:



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

- Մփիւոքի մէջ ծնած ու մեծցած սերունդներ ընկերային, ազգային ու հոգեբանական բազմաթիւ խնդիրներ ունեցան:



1915-1922

- Մեծ Եղեռնի կեղրոնական դէպքը տեղի ունեցաւ 1915-1917ին:
- Անկէ ետք տեղի ունեցան նոր ջարդեր`
 - Արեւելեան Հայաստան, 1918 եւ 1920
 - Կիլիկիա, 1920-1921
 - Փոքր Ասիա, 1921-1922
 - Իզմիր, 1922

ՃԱՆԱԶՈՒՄ

- 1965Էն Էտք, հայութիւնը սկսաւ պայքարիլ Մեծ Եղեռնի ճանաչումին համար որպէս ցեղասպանութիւն:
- Առաջին երկիրը՝ Ուրուկուայ (1965), երկրորդը՝ Արժանթին (1985):
- Մինչեւ հիմա, 20 երկիր պաշտօնապէս ճանչցած է ցեղասպանութիւնը:
- Պատմաբաններու մեծ մասն ալ կ'ընդունի ցեղասպանութիւնը:

ԹՐՔԱԿԱՆ ԺԽՏՈՒՄ

- Հայերը ապստամբութիւն մը ծրագրած են կամ գործադրած են՝ ռուսական օգնութեամբ
- Հայերը տեղափոխուած են՝ ապահովութեան պատճառներով
- Երկու կողմերը՝ թե՛ թուրքերը եւ թե՛ թուրքերը ջարդեր գործած են
- Հայերը մահացած են, բայց թուրքեր ալ մահացած են
- Հայ զոհերու թիւը «ուռեցուած» է

ԻՆՉՈՒ ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ՄԵՐԺԷ ՃԱՆԱԶՈՒՄԸ

- Ցեղասպանության փաստը ճանչնալ կը նշանակէ, որ Թուրքիա յանցագործ է:
- Յանցագործը պէտք է ներողութիւն խնդրէ եւ հատուցէ:
- Գերմանիա այդպէս ըրած է հրեաներու պարագային:
- Որոշ երկիրներ կ'ընդունին Մեծ Եղեռնը, բայց «ցեղասպանութիւն» բառը չեն գործածեր, որպէսզի Թուրքիոյ հետ կապերը չխանգարեն: